ՀՀ ներքին գործերի նախարարության
Ֆինանսաբյուջետային վարչության
հաշվարկային բաժնի պետ՝
Տաթևիկ Ղուկասյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության Ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Գայանե Գևորգի Սահակյանի կողմից 12.01.-12.07.2026 թ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

2026 թվականի հունվարի 12-ից հուլիսի 12-ի ժամանակահատվածի ընթացքում իմ կողմից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա.Շիրակացի 17 աշխատավայրում կատարվելեն հետևյալ աշխատանքները.

1. Ամփոփել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մուշի բաժնի պահպանման ծախսերի և սոցիալական փաթեթի գծով նախատեսված ծախսերի 2026 թվականի կիսամյակային նախահաշիվները, ներկայացրել հաստատման ՀՀ ՆԳՆ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն:
2. Իրականացրել եմ ատեստավորման արդյունքով ծառայողների հավելավճարի հաշվարկի գործընթացը հաստատված եզրակացությունների հիման վրա, հաշվարկել եմ աշխատավարձերի, պարգևատրումների, ներքին գործուղումների, ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում դրամական հատուցման, չօգտագործված արձակուրդի, անաշխատունակության նպաստների հաշվարկները, արձակուրդային վճարների հաշվարկներ, կազմել հաշվարկի թերթիկներ, կազմել բացատրություններ, վճարման ցուցակներ, հաշվարկա-վճարային տեղեկագրեր և ամփոփ հաշվետվություններ:
3. Իրականացրել եմ « Առողջության համընդհանուրապահովագրության մասին» օրենքով նախատեսված դրույթները՝ մասնավորապես ճշտվել է ապահովագրավճար վճարողների շրջանակը, դրույքաչափերը, կատարվել է ապահովագրավճարի պահումներ:
4. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ – պահանջագրեր, ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:
5. Կատարել եմ աշխատավարձի անհատական քարտերի թղթային և էլեկտրոնային եղանակով հաշվապահական հաշվառման աշխատանքները, տրամադրել եմ տեղեկանքներ համաձայն ներկայացված զեկուցագրի հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, եկամտահարկի վերաբերյալ: Ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել եմ արձակման թերթիկներ, դրամական վարձատրության վկայականներ, կատարել եմ վերջնահաշվարկներ:

6. Վարել եմ և ավարտին եմ հասցրել, լիազորագրերի վերջանալու պատճառով, լիազորագրերի հաշվառման մատյան, որի միջոցով կարգավորվում էր բաժնի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ տնտեսական և այլ պարագաների ստացումը ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչությունից:

7. Կազմել եմ 2026 թվականի առաջին կիսամյակի հաշվապահական հաշվեկշիռը, որը ներկայացրել եմ ՀՀ ՆԳՆ Ֆինանսաբյուջետային վարչություն:

8. Mulberry համակարգով ՀՀ ՆԳՆ Ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարականները, շրջաբերականների պահանջները, հրամանները, ցուցումները, նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները ընդունվել է ի գիտություն և կատարվել է ճշգրիտ սահմանված ժամկետում:

9. Համատեղ կատարել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Կոմայրիի և Ախուրյանի բաժինների նույնատիպ աշխատանքները:

ՀՀ ՆԳՆ ֆինասաբյուջետային վարչության փորձագետ՝ Գայանե Սահակյան

<< 30 >> հուլիսի 2026 թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

գնահատում եմ ____________

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային
վարչության հաշվարկային բաժնի պետ՝ Տաթևիկ Ղուկասյան

<< 30 >> հուլիսի 2026 թիվ